ՆԱԽԱԳԻԾ

Հաստատված է
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2024 թվականի նոյեմբերի -ի N որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2024

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	-	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	-	Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	-	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԱԱՏՄ	-	Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԻԱՓՎ	-	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻԽՀՏԱԲ	-	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԴՇՎՎ	-	Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն
ԲՕՍՎՎ	-	Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն
ՀՍՀՎՎ	-	Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն
ԱՕՎՎ		Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն
ՏԿ		Տարածքային կենտրոն

ք. Երևան, Արաբատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 755-Լ որոշման համաձայն:

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

ք. Երևան, Արաբատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում գործունեություն է ծավալում ավելի քան 158 094 տնտեսավարող սուբյեկտ: Հաշվի առնելով, որ Տեսչական մարմինն ստեղծվել է 2017 թվականին, վերջնականապես ձևավորվել է, և իր գործունեությունը կանոնակարգող օրենսդրական հիմնական փաթեթը հաստատվել է 2018 թվականի կեսերին, իսկ ստուգումների գործընթացը մեկնարկել է միայն 2020 թվականի կեսերին, այդ կարճ ժամանակահատվածում դեռևս չի հաջողվել տնտեսավարող սուբյեկտների նշանակալի հատվածին ներգրավել Տեսչական մարմնի վերահսկողության ծածկույթում:

Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 24-ի N 14-Լ որոշմամբ հաստատվել է 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը, որով նախատեսվել էր իրականացնել 850 ստուգում (795 տնտեսավարող սուբյեկտների մոտ), որոնցից՝ 782 բարձր ռիսկայնությամբ, 26 միջին ռիսկայնությամբ և 42 ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ:

2024 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում հրապարակվել են տարեկան պլանավորված 795 տնտեսավարող սուբյեկտից 664 ստուգման հանձնարարագրերը: Միաժամանակ իրականացվել է 202 վերստուգում:

ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌ 31.10.2024Թ.



- Աշխատանքային իրավունք 143
- Աշխատանքի անվտանգություն 145
- Բուժ 29
- Դեղ 178
- Հիգիենա 169

Ընդամենը՝ 664 ստուգում

ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌ 31.10.2024Թ.



- Աշխատանքային իրավունք 15
- Աշխատանքի անվտանգություն 43
- Բուժ 47
- Դեղ 31
- Հիգիենա 66

ք. Երևան, Արաբատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում ստուգումներին զուգահեռ իրականացվել են նաև վարչական վարույթներ:

2024 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում իրականացվել է 2290 վարչական վարույթ:



2024 թվականի 3 եռամսյակների կտրվածքով իրականացված ստուգումների արդյունքում լրացված ստուգաթերթերի միավորների վերլուծության արդյունքում պարզվել է, որ, ըստ վերահսկողության առանձին ոլորտների, տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից առկա իրավիճակը հետևյալն է (ստուգաթերթերի խախտված միավորներ՝ տոկոսային արտահայտմամբ).

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)
1	**Դեղերի շրջանառություն**	8.3
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	*

ք. Երևան, Արաբատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	4.9
4	**Աշխատանքային իրավունք**	6.8
5	**Աշխ. անվտանգություն**	5.4

*Ոլորտում ստուգումները մեկնարկել են 4-րդ եռամսյակից՝ ստուգաթերթերի լրամշակմամբ պայմանավորված

Միաժամանակ, վերլուծությամբ պարզվել է, որ նույն ժամանակահատվածում ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման նպատակով տրված կարգադրագրերով տրված առաջադրանքների կատարման նկատմամբ հետևողականություն են ցուցաբերել տնտեսավարող սուբյեկտների **82.7%**-ը՝ կատարողականը պարզելու նպատակով իրականացված և ավարտված 127 վերստուգումից 105 դեպքում խախտումներ չեն հայտնաբերվել՝ կատարվել են կարգադրագրով տրված առաջադրանքները:

Տեսչական մարմնի կողմից իրականացած վերահսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերահսկողության բոլոր ոլորտներում առանձնանում են օրենսդրության մի շարք պահանջներ, որոնց խախտումներն առավել հաճախ են հանդիպում: Այսպես.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ ՀՀ-ում չգրանցված դեղեր ներմուծելը,
- ✓ դեղերն օրենքի խախտմամբ ներմուծելը,
- ✓ չգրանցված կամ օրենքի խախտմամբ ներմուծված դեղեր իրացնելը,
- ✓ դեղատոմսեր չգրելը և դեղատոմսով բաց թողնվող դեղերն առանց դեղատոմսի բաց թողնելը,
- ✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ լիցենզիա պայմանների և պահանջների խախտումները,

- ✓ բժշկական փաստաթղթերի թերի լրացումը,
- ✓ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների խախտումները,
- ✓ առանց համապատասխան ՇՄՋ հավաստագրի աշխատանքի թույլատրելը:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ աղմուկի՝ օրենսդրությամբ թույլատրելի մակարդակների գերազանցումը,
- ✓ խմելու ջրամատակարարման համակարգին ներկայացվող պահանջների խախտումները,
- ✓ բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների խախտումները,
- ✓ պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգի խախտումները:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման խախտումները,
- ✓ աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը խախտելը,
- ✓ կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերին ներկայացվող սանիտարական նորմերի և կանոնների խախտումները,
- ✓ աշխատավարձ և վերջնահաշվարկ չվճարելը կամ ժամկետանց վճարելը,

✓ օրենքով սահմանված կարգով և ժամկետում աշխատանքային պայմանագրեր չկնքելը,

✓ նվազագույն աշխատավարձը չպահպանելը:

Վերահսկողական աշխատանքներին զուգահեռ իրազեկման աշխատանքներ են իրականացվել Տեսչական մարմնի վերահսկողության ներքո գործող տնտեսավարող սուբյեկտների շրջանում: Իրազեկման դասընթացների թեմաների շրջանակը կազմվել է՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ թույլ տրված խախտումները: Միաժամանակ, իրականացվել են իրազեկումներ նոր ընդունված իրավական ակտերի և դրանցով սահմանված պահանջների վերաբերյալ:

Լրամշակվել են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների մի շարք ստուգաթերթեր՝ համապատասխանեցնելով գործող նորմատիվ իրավական ակտերին, միաժամանակ՝ վերացնելով վերահսկողության արդյունքում արձանագրված օրենսդրական բացերը: Այսպես.

✓ ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 977-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի շրջանառության ոլորտի NN 2.1, 2.2 և 2.3 ստուգաթերթերում:

✓ ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N 1492-Ն որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի ստուգաթերթերում՝ N 1.2 ստուգաթերթը շարադրվել է նոր խմբագրությամբ, միաժամանակ՝ լրացվել է N 1.25 ստուգաթերթով՝ նախադպրոցական կրթական հաստատություններում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջների նկատմամբ սահմանած նոր պահանջներով պայմանավորված:

✓ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 1650-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ է շարադրվել բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի 16 ստուգաթերթ (NN 3.1-3.16):

Առաջարկություններ են ներկայացվել Գրասենյակին՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտները կանոնակարգող մի շարք օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակով:

Միաժամանակ, առաջարկություններ են ներկայացվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված օրենսդրական փոփոխությունների և լրացումների մի շարք նախագծերի վերաբերյալ:

ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես.

1. Աշխատանքային իրավունքի, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում արձանագրված ուշադրության արժանի խնդիրներից է այն հանգամանքը, գործատուների կողմից (շինարարություն, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, առողջապահություն և այլն) հիմնական աշխատանքները ծառայությունների մատուցման պայմանագրերով հանձնարարվում են ֆիզիկական անձանց, այդ թվում՝ օտարերկրացիներին, ինչը տարեցտարի ավելանում է: Աշխատանքային պայմանագրի հիման վրա (կամ աշխատանքի ընդունման մասին գործատուի ընդունած անհատական ակտով) իրական աշխատանքային հարաբերությունները ծառայությունների մատուցման պայմանագրերով քողարկելու հետևանքով, այդ հարաբերությունները դուրս են մնում Տեսչական մարմնի վերահսկողական իրավասությունների շրջանակներից: Ինչպես նաև, բացասական հետևանքներից են այն, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողները զրկված են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված

երաշխիքներից (առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովում, աշխատաժամանակի նորմալ տևողություն, հանգստի ժամանակ, արձակուրդի իրավունք, վերջնահաշվարկ, գիշերային, արտաժամյա, հանգստյան օրերի աշխատանքի դիմաց լրացուցիչ աշխատավարձի վճարում, ժամանակավոր անաշխատունակության դեպքերում վճարումներ, առողջությանը պատճառված վնասի հատուցումներ, բժշկական զննությունների իրավունք և այլն):

2. Նույն ոլորտում տնտեսական գործունեության մի շարք տեսակների համար աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթեր հաստատված չեն, իսկ գործող ստուգաթերթերից N 4.2, 4.3 և 5.1 ստուգաթերթերը լրամշակման կարիք ունեն, որի արդյունքում կբարձրանա աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

3. Դեղերի շրջանառության ոլորտում անհրաժեշտ է բարձրացնել շրջանառության փուլերում կիրառվող իրավական պահանջների արդյունավետությունը՝ մասնավորապես «Դեղերի մասին» օրենքում Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի պահպանման վերաբերյալ ոչ բավարար իրավակարգավորումները նպաստում են անօրինական ճանապարհով ներմուծված դեղերի շրջանառության խթանմանը: Խնդրով պայմանավորված նաև անհրաժեշտ է փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, ինչը ավելի

կխթանի դեղերի շրջանառության ոլորտում դեղերի պահպանման հետ կապված կարգավորվող իրավական դրույթների պահպանողականությունը:

4. Դեղերի շրջանառության ոլորտում ընթացիկ տարում իրականացված ստուգումների արդյունքում դեղերի մեծածախ առևտրի N 2.3 ստուգաթերում արձանագրվել է անհամապատասխանություն, որով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել դեղերի մեծածախ առևտրի N 2.3 ստուգաթերթում: Մասնավորապես ստուգաթերթի տեղեկատվական հարցերի 3-րդ կետում նախատեսված է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի արտադրության վերաբերյալ հարց՝ իրացման հարցի փոխարեն:

5. Նույն ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքները վկայում են, որ անհրաժեշտ է բարձրացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ավագ բուժաշխատողների իրազեկվածության մակարդակը դեղատոմսերի լրացման, դուրսգրման, բաց թողնման վերաբերյալ:

6. Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում արձանագրվել են խնդիրներ՝ կապված գործող իրավական ակտերի մի շարք պահանջների պարզաբանման և տարընթերցման հետ: Այդ խնդիրները քննարկելու, պարզաբանելու, անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական կարգավորումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել հանդիպում կազմակերպել լիազոր մարմնի հետ:

7. Նույն ոլորտում վերահսկողության ընթացքում պարբերաբար խնդիրներ են առաջանում բժշկական օգնության և սպասարկման առանձին տեսակների շրջանակներում իրականացվող բժշկական միջամտությունների ծավալների հետ կապված, միաժամանակ՝ խնդրահարույց են այս դեպքերի հետ կապված լիազոր մարմնին կատարված հարցման արդյունքում ստացված պարզաբանումները, որոնք

ք. Երևան, Արաբատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

մի շարք դեպքերում բողոքարկվում են: Այս խնդիրները պահանջում են օրենսդրական հստակ կարգավորումներ:

8. Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում առկա են խնդիրներ խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման գործընթացում, որոնք մասնավորապես պայմանավորված են համակարգերը շահագործողների բացակայությամբ:

9. Ընթացիկ տարում ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի Հանրապետությունում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին» օրենքը, և ընդունվել է «Հանրային առողջապահության մասին» օրենքը: Նշված հանգամանքով պայմանավորված՝ լիազոր մարմնի կողմից մեկնարկել է սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հանրային առողջապահական նորմատիվներով փոխարինելու գործընթացը: Հանրային առողջապահական նորմատիվների հաստատմամբ փոփոխման ենթակա են լինելու սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի բոլոր ստուգաթերթերը: Հետևաբար, այս ոլորտի բոլոր ստուգաթերթերը փոփոխելու անհրաժեշտությունից բացի, անհրաժեշտ է ստուգաթերթերի փոփոխությունների իրականացումը կազմակերպել այնպես, որպեսզի չխաթարվի ստուգումների գործընթացը:

10. Վերահսկողության բոլոր ոլորտներում դեռևս արձանագրվում է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ, ինչը պայմանավորված է նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի հաճախակի փոփոխություններով և նոր իրավական ակտերի ընդունմամբ:

Հավելված N 1

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 25-ի N --- որոշման

Միջոցառումներ
ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	Շինարարության, մշակող արդյունաբերության, հանքարդյունաբերության ոլորտներում աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության համակարգային խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում Աշխատողների կյանքի և առողջության նկատմամբ վերահսկողություն և կանխարգելում Արտադրական դժբախտ դեպքերի քանակի նվազեցում	ԱՕՎՎ ԻԱՓՎ	1-ին եռամսյակ
2	N 4.2,4.3 և 5.1 ստուգաթերթերի լրամշակում և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում	Աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման	ԱՕՎՎ ԻԱՓՎ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	նոր ստուգաթերթերի նախագծերի մշակման վերաբերյալ առաջարկության ներկայացում Գրասենյակ	նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության ապահովում		
3	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված գործընթացի ներքո՝ գործատուի ու աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրերի շրջանակներում անձանց քողարկված շահագործելու վերաբերյալ ԱԱՏՄ-ի կողմից արձանագրված ընդհանուր խնդիրների ամփոփ տեղեկատվության ներկայացում Գրասենյակ	Վերահսկողության արդյունավետության բարձրացում, աշխատողների առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքի իրացման ապահովում	ԱՕՎՎ ԻԱՓՎ	1-2-րդ եռամսյակ
4	«Դեղերի մասին» օրենքում լրացում կատարելու և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	«պահպանում» և «իրացում» հասկացությունների տարաբնույթ մեկնաբանության արդյունքում խնդրահարույց դեղերը մանրածախ կարգով իրացնելու և վարչական պատասխանատվությունից խուսափելու կանխում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	2-րդ եռամսյակ
5	Դեղերի մեծածախ իրացման N 2.3 ստուգաթերթի մեջ փոփոխություն կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Վերահսկողության ընթացքում առաջացած խնդիրների լուծում, լիարժեք վերահսկողության իրականացում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	2-րդ եռամսյակ
6	Նոր ընդունված հանրային առողջապահական նորմատիվների հիման վրա նոր ստուգաթերթերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Ստուգումների գործընթացի պատշաճ ապահովում	ՀՍՀՎՎ	Յուրաքանչյուր դեպքում՝ մեկամսյա ժամկետում

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

7	Խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում շահագրգիռ մարմիններին	Խմելու ջրամատակարարման բոլոր համակարգերի շահագործողների սահմանում (առկայություն), ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելում	ՀՍՀՎՎ	2-րդ եռամսյակ
8	Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրների վերաբերյալ քննարկում Լիազոր մարմնի հետ, օրենսդրական կարգավորումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	ԲՕՍՎՎ ԻԱՓՎ	1-2-րդ եռամսյակ

Հավելված N 2

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 25-ի N --- որոշման

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2025 թվականի տարեկան ծրագիր

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	Մարդկանց, այդ թվում՝ երեխաների, թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի	ՀՀ-ում 2023-2025 թթ. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	3-րդ եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում	ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացում		
2	Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով	Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	Առնվազն եռամսյակը մեկ անգամ
3	Գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համար աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ սեմինարների կազմակերպում	Իրազեկվածության բարձրացում և Աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովում	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	Առնվազն եռամսյակը մեկ անգամ
4	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացման (այդ թվում էլեկտրոնային դեղատոմսերի), դուրսգրման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկում	«Դեղերի մասին» օրենքով, ենթաօրենսդրական իրավական ակտով սահմանված դեղատոմսերի լրացման, դուրսգրման, բաց թողնման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ԴՇՎՎ ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

5	Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման/ հանրային առողջապահության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկում	Վերահսկողության ոլորտում արձանագրվող խախտումների կանխարգելում ու նվազեցում	ՀՍՀՎՎ ԻԽՀՏԱԲ	Յուրաքանչյուր ՏԿ առնվազն կիսամյակը մեկ անգամ
6	Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար իրազեկման դասընթացների իրականացում	Գործող և նոր ընդունված իրավական ակտերի պահանջների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՏԿ-ի բաժիններ ԻԽՀՏԱԲ	Յուրաքանչյուր ՏԿ առնվազն կիսամյակը մեկ անգամ
7	Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության, ստուգումների մեկնարկի, վերահսկողության շրջանակում կիրառվող ստուգաթերթերի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի մասին իրազեկում	Իրազեկման նյութի պատրաստման, Տեսչական մարմնի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան հարթակների միջոցով տարածելու միջոցով տնտեսավարողների և հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ
8	Տեսչական մարմնի գործունեության և կատարվող աշխատանքների մասին իրազեկում	Իրազեկման նյութերի պատրաստման, ՀԼՄ-ների հետ համագործակցությամբ հոդվածների պատրաստման, դրանք Տեսչական մարմնի կայքի և ֆեյսբուքյան հարթակով տարածելու արդյունքում իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	Յուրաքանչյուր եռամսյակ և ըստ անհրաժեշտության
9	Նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ տվյալների, այդ թվում՝ ստացված	Հաշվետվությունների, իրազեկման նյութերի պատրաստման և հրապարակման միջոցով տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում	ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	դիմում-բողոքների, հարցումների, զանգերի մասին իրազեկում			
10	Ոլորտային նշանակալի և տոնական օրերի վերաբերյալ հանրային իրազեկում	Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանում գործընկերային միջավայրի ապահովում	ԻԽՀՏԱԲ ոլորտային վարչություններ	Ըստ օրացուցային օրերի
11	«Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի քանակի և բովանդակության պարբերաբար ամփոփում, վերլուծություն և լուսաբանում	Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում	ԻԽՀՏԱԲ	Յուրաքանչյուր եռամսյակ
12	Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված իրավական ակտերի, այդ թվում՝ ստուգաթերթերի վերաբերյալ պաշտոնական կայքէջով իրազեկում և ակտերի հրապարակում	Նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության բարձրացում, վերահսկողության ոլորտներում անվտանգության ապահովում	ԻԽՀՏԱԲ ԻԱՓՎ ոլորտային վարչություններ	Յուրաքանչյուր դեպքում՝ պաշտոնական հրապարակումից հետո 10-օրյա ժամկետում

ք. Երևան, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am